փաստն ինքնին չի բացառում՝ հրամանի ուժի մեջ մտած լինելու հանգամանքը: Դատարանի նման եզրահանգումը պայմանավորված է քաղաքացիական իրավահարաբերություններում համապատասխան իրավական նորմերի բացակայությամբ: Ավելին, հայցվորի կողմից հրամանը չվիճարկելը (սույն քաղաքացիական գործում հրամանը վիճարկելու ապացույցները բացակայում են) և հետագայում ընթացակարգային խախտումների վկայակոչումը հիմք չեն հանդիսանում ՝ հրամանի իրավաչափությունը կասկածի տակ առնելու համար, քանի որ օրենսդիրը սահմանել է տարբեր ընթացակարգեր և իրավունքի պաշտպանության տարբեր եղանակներ, որպիսի պայմաններում հայցվորը զրկված չէր նշված հրամանի իրավաչափությունը դատական կարգով վիճարկելու հնարավորությունից, այդ թվում նաև՝ հիմքում դնելով համապատասխան անգործությունը:

Ինչ վերաբերում է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ցուցակում ներառելուն, ապա Դատարանը գտնում է, որ ՀՀ ֆինանսների նախարարությունը համապատասխան որոշման առկայությամբ պայմանավորված իրականացնում է, որոշակի գործողություն, որի ընթացքում համապատասխան որոշումը այլ անձանց ուղարկված լինելու հանգամանքը պարզելու պարտականություն վերջինս չի կրում:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը, Դատարանը գտնում է, որ հայցն անհիմն է և ենթակա է մերժման:

Անդրադառնալով հայցի ապահովման միջոցների պահպանման հարցին, Դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործով կիրառված հայցի ապահովման միջոցները պետք է պահպանվեն մինչև դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը, որից հետո ենթակա են վերացման:

<u>Դատական ծախսերը</u>

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ և 109-րդ հոդվածների դրույթները, հաշվի առնելով այն, որ ներկայացված հայցապահանջը ենթակա է մերժման, իսկ հայցվորը վճարել է պետական տուրքի գումարը, Դատարանը գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

<u>Եզրափակիչ մաս.</u>

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 188-189, 191-192, 198, 234.12 հոդվածների պահանջներով, դատարանը՝

Վճռեց

1. «Լեոպոլդ և ընկերներ» ՍՊԸ-ի ընդդեմ ՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, ՀՀ Ֆինանսների նախարարության՝ Պատվիրատուի պատճառաբանված որոշում ընդունելու և հայցվորին տրամադրելու անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու և որպես հետևանք «Լեոպոլդ և ընկերներ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում 2 /երկու/ տարի ժամկետով ընդգրկելու վերաբերյալ 05.11.2022 թվականի որոշումը վերացնելու /անվավեր ճանաչելու/ պահանջի մասին, մերժել:

2.Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 17.11.2022թ.-ի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցները պահպանել մինչև սույն վճռի օրինական ուժի մեջ մտնելը, որից հետո՝ վերացնել:

3.Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

4. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակելու պահից և կարող է բողոքարկվել վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ ԷԴ. ԱՄԱԼՅԱՆ